28.01.2025թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 33-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Սիրելի հայրենակիցներ, Սևան համայնքի հարգելի բնակիչներ

Շնորհավորում եմ բոլորիս հայ ժողովրդի նվիրական տոնի՝ Հայոց բանակի կազմավորման 33-րդ տարեդարձի առթիվ:

Հայոց բանակի ստեղծումը մեր նորագույն պատմության լրջագույն ձեռքբերումներից է, մեր պետականության կարևորագույն նվաճումը: Այն ստեղծվեց հազարավոր հայորդիների կամքի, անձնազոհության ու նվիրումի շնորհիվ, անցավ փորձություններով լի ճանապարհ, սրբագործվեց հայորդիների հերոսացմամբ:

Հայոց բանակն ազգային միասնականության խորհրդանիշն է, որը դարձել է պատասխանատու, հայրենասեր քաղաքացու դաստիարակման դարբնոց:

Բանակը մեր անցաթուղթն է և լինելության վավերագրերից մեկը: Երեքտասնամյակից ավելի Հայոց բանակը դարձել է մեզանից յուրաքանչյուրի անբաժանելի մասը, մեր հպարտության և արժանապատվության երաշխավորը:

2020թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմում էլ Հայոց բանակին զինվորագրված 18-20 տարեկան մեր տղաները, ՀՀ Զինված ուժերում իրենց ծառայությունն իրականացնող սպաներն ու հրամանատարները կրեցին պատերազմի ողջ ծանրությունը:

Սևան համայնքը 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո էլ թշնամու սանձազերծած ագրեսիայի հետևանքով դեպի անմահություն ճանապարհեց հերոսներին, Հայոց բանակին հավերժ զինվորագրված մեր սուրբ նահատակներին:

Հավերժ փառք և խոնարհում մեր լուսավոր տղաների հիշատակի առաջ:

Բանակը կենդանի օրգանիզմ է՝ իր առանձնահատկություններով և պահանջներով, ու յուրաքանչյուր զինվոր ոչ միայն հայրենիքի պաշտպանն է, այլ, նախևառաջ, մեր բանակի կայացման, ամրապնդման երաշխավորը:

Այս օրերին շարունակվում է ձմեռային զորակոչը, և սևանցիները բանակ են ճանապարհում իրենց որդիներին, ճանապարհում են՝ մաղթելով անփորձանք ու խաղաղ ծառայության, բարի վերադարձ:

Հարգելի հայրենակիցներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների և համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ բոլորիս այս նվիրական տոնի առթիվ:

Հայոց բանակի կազմավորման 33-րդ տարեդարձի առթիվ շնորհավորում եմ հայ զինվորին, նրան, որն օրեր առաջ է համալրել Հայոց բանակի շարքերը՝ իր հետ տանելով մեր բարեմաղթանքներն ու օրհնանքները, նրան, որն արդեն հաղթահարել է բանակային կյանքի բոլոր դժվարությունները և հպարտորեն է կրում իր կոչումը,

նրանց, որոնք իրենց երկամյա ծառայությունը պատվով կատարած վերադարձել են կամ օրեր անց կվերադառնան տուն:

Շնորհավորանքներս եմ հղում բանակաշինության պատասխանատու գործի ակունքներում կանգնած և Հայաստանի զինված ուժերում իրենց կենսագրությունը գրող անձանց, սպային ու հրամանատարին՝ մաղթելով խաղաղ ու անվտանգ ծառայություն:

Շնորհավորում եմ զինվորների ծնողներին ու հարազատներին՝ մաղթելով համբերություն, հոգեկան խաղաղություն:

Մեր պետությունը կանգնած է բարդ մարտահրավերների առջև, ու գերակա են անվտանգային հարցերը: Վստահ եմ, որ միասնաբար ու համատեղ ուժերով մենք կարող ենք դիմակայել ցանկացած դժվարության՝ թիկունք կանգնելով Հայոց բանակին:

Հայրենիքը մեր սիրո ու ուշադրության կարիքն ունի, և Հայոց բանակի մարտունակությամբ բարձրացմամբ մեր հայրենիքը կդառնա առավել հզոր ու կայացած:

Մեր պետականությունը պաշտպանելու հրամայականը պետք է դառնա յուրաքանչյուրիս հայրենանվեր աշխատանքի առանցքը, մեր համախմբումն ու միասնությունն էլ պետք է ուժ տան հայոց բանակին՝ այն դարձնելով առավել ուժեղ ու կայացած:

Սիրելի հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս հայ ժողովրդի համար կարևորագույն այս տոնի կապակցությամբ:

Փառք Հայոց բանակին, բանակաշինության նվիրյալներին և զինծառայողներին:

Աստված պահապան մեր բանակին և զինվորներին: